

Երբ այնքան էն բնագիրը ունի segullah բառը, որ մասնաւոր դանձ գոյք է նշանակում: Եւ այս իմաստը հանում են մեկնաբանները Ա. Մնաց. ԻԹ, 3 esti moi ho peripepoiemai xru-sion kai argurion խօսքերից, ուր հրէական բնագրում նոյն segullah բառն է կարդացւում:

Դաւիթ մարգարէն ասում է, որ տաճարի շինութեան համար կը նուիրէ ոչ միայն հասարակութիւնից հաւաքած գումարը, այլ եւ իր անձնականը, «ինչ որ ինքը պատրաստել է իր համար», ուրեմն իր սեփականը: Հայ թարգմանիչը չի հասկացել նախադասութեան իմաստը. «եղեւ ինձ զորս նուիրեցիդ տեսուն ոսկի եւ արծաթ», բնաւ չէ տալիս յոյնի միտքը. բնագրում խօսքը այն ոսկու եւ արծաթի մասին է, որ Դաւիթը դիզել է պատրաստել է իր համար, մինչ հայը կարծում է, որ գոյքը պատրաստած է տիրոջ համար, ուստի յոյն բառը հայը թարգմանում է «նուիրեցի» եւ աւելացնում է տեսան բառը:

Եթէ թարգմանիչը լինէր այն անձը, որ թարգմանել է Մակարարեցոց գիրքը, պիտի ասէր՝ «է իմ սեպհական ոսկի եւ արծաթ»:

Հերոնիմը երբայական segullah թարգմանում է peculiaris: Լատիներէն peculiarium է կոչւում այն դրամը, որ հայրը նուիրում է որդուն կամ տէրը՝ ծառային. եւ ուրեմն peculiaris է ամէն գոյք, որ կրում է peculiarium-ի բնաւորութիւն: Դաւիթի գոյքը segullah է peculiaris անհատական եւ զատ եւ ոչ հասարակաց և ընդհանուր: (Այսպիսով մօտենում է յոյն idios-ին, որ հակադրւում է demosios 'հասարակաց' կամ koinos 'ընդհանուր' բառերին): Բայց եւ այնպէս ոչ յոյնը եւ ոչ հայը segullah չեն թարգմանել այն բառով, որ նշանակում է սեփական:

Յոյն idios-ի դէմ ամենուրեք հայն ունի իւր մեր, ձեր դերանունները, երբեք սեփական, որ է իսկական իմաստը:

Հայ սեպհական = periousios = peculiaris առանձին երանդ ունի, նշանակելով այն ինչ որ զատ է, ուրոյն եւ ոչ նման ընդհանուրի:

Սեպհականը Ս. Գրքում իրապէս իր տեղն է գործածուած:

Տեսանք, որ սեպհական է այն բաժինը, որ

զատուած է տանուտէրական ընդհանուր գոյքից, եւ որ շուտով նոյնանալու է սեփականութեան հետ:

Ղազար Փարպեցին պատմում է, որ Դենչապուհը հայ քահանաներին նահատակելուց յետոյ նրանց դիակները վրայ պահպան կարգեց ինը հոգի եւ նրանց թւում երանելի Խուժիկին «որպէս զկարի սեպհականագոյն եւ պիտոյ իւրում հրամանի»:

Ինչ որ հրէից ժողովուրդն էր Եհովայի համար, նոյնն է Խուժիկը պարսիկ պաշտօնեայի անջուր: Ոչ Խուժիկն էր սեփականութիւն պարսիկ եւ ոչ հրէականը՝ Աստուծոյ:

Փարպեցու մօտ բառը պահել է տակաւին սկզբնական երանդը, որպէս 'ուրոյն, ընտիր, ընտրելագոյն':

Սեպուհների բաժինը այսպիսով ուրոյնութեան վրայից անցնում է սեփականութեան: Սեպուհների զատումը եւ առանձին ազնուական դաս կազմելը իրր սեպհական ազատութիւն ապացոյց է մեր մտքի: Ոչ միայն դադարները, այլ եւ բառերը միանգամից չեն հասունանում, այլ պէտք ունին ժամանակի:

Սեպուհների անջատումը արդէն նշան է եւ հետեւանք նախարարական ականդների քայքայման:

Արշակունեաց անկումը վճռական մոմենտ է, որին յաջորդող պայմանները միայն արագացնել կարող էին երէկի կազմալուծումը: Պիտի թառամէր մանաւանդ այն իրաւակարգը, որ դերազանցօրէն Արշակունի ծաղիկ էր:

Հինգերորդ եւ վեցերորդ դարերը համարել ենք սեպհական ազատութեան զարգացման շրջան:

Մեզ առարկում են, որ երեւոյթը աւելի հին է, քանի որ Փաւստոս յիշում է Մհերոստան Արծրունու եւ Վահան Մամիկոնեանի սեպհական տները:

Հնութիւնը միշտ հնարաւոր է. հասարակական երեւոյթները մի դարնան չեն բուսնում եւ մի աշնան թարչամում: Բայց բերած օրինակը անյաջող է: Փաւստոսի գործը Ե. դարից յառաջ չէ. այնուհետեւ դաւաճան իշխանները՝ կոթնած պարսկական ոյժի՝ կարող էին պահանջել եւ այն, ինչ որ օրինական էր համարւում երկրի սովորութիւնների տեսակէտից: